

Լ Ե

Ս. ՇՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅ ՎԱՆՔԸ ԳԱԶԱՅԻ ՄԷՋ

1. Քրիստոնէութիւնը Գազայի մէջ.

Գազայի բնակիչները շատ տրամադիր չէին քրիստոնէութիւնը ընդունելու, վասն զի այս քաղաքը հելլենական հեթանոսութեան կեդրոն մ'էր և իր գլխաւոր մեհեանը Marnéion անուամբ կը մրցէր Sérapeion ի հետ: Ընդհակառակն Մաեուժայի բնակիչները չէին ընդդիմանար քրիստոնէութեան. այդ պատճառաւ էր որ Կոստանդիանոս հրամայեց Մաեուժան բաժնել Գազայէն: Մաեուժան դարձաւ անկախ քաղաք մը Կոստանդիա անուամբ, մինչ ցգահակալութիւն Յուլիանոս Ուրացոյի, որ դարձեալ գայն միացուց Գազայի: Դ. դարու վախճանին հեթանոսութիւնը վերջ գտաւ Գազայէն Իլարիոնի հրաշքներով, Ս. Պորփիւրի ջանքերով և զինու զօրութեամբ: Գազայի դաւառը ունէր երեք եպիսկոպոսներ, մին՝ ի Գազա, միւսն՝ ի Մաեուժա, և երրորդն յԱնթէտոն. Գազա և Անթէտոն այժմս ալ ունին անուանակիր եպիսկոպոսներ: Գազայի քրիստոնէական դպրոցը Ե. և Զ. դարերուն նշանաւոր եղած է Զոզիմի, Պրոկոպոսի, Կորիքլոսի, Իգնատրի, Ենայի, Տիմոթէոսի և Յովհաննէսի շնորհիւ: Նոյն ժամանակները Գազայի մէջ կային առնուազն հինգ եկեղեցիներ, որոնցմէ մին էր EUDOXIANA՝ Marnéionի տեղ. հաւանաբար այժմու մեծ մզկիթը: Տօները կը կատարուէին մեծ հանդիսաւորութեամբ: Քաղաքը պալատներով լեցուն էր այն ատեն, երբ Արաբները կ'իշխէին հոն Գազայի մօտ, Թատուէնի պատերազմէն վերջ (635):

2. Գազան ըստ արաբ պատմագիրներու.

Արաբ պատմագիրները Գազայի վրայ կու տան շահեկան տեղեկութիւններ. Եագուպի 874ին կը գրէ. «Գազան Պաղեստինի